ՀՀ ԱԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԵՐԵՎԱՆ 2014

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁ. N2, ԿԱՅԱՑԱԾ 05.05.2014Թ.
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ՝
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ուսանողական խորհուրդը (այսուհետև՝ ՈՒԽ) ուսանողների ինքնակառավարման ներկայացուցչական-ընտրովի բարձրագույն մարմին է:
2. ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը:
3. ՈՒԽ-ը գործում է ՀՀ Սահմանադրությամբ, գործող օրենսդրությամբ, Ակադեմիայի և սույն կանոնադրությամբ:
4. ՈՒԽ-ի կանոնադրությունը հաստատվում է Ակադեմիայի գիտական խորհրդի կողմից:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Զորավիգ լինել ուսանողների սոցիալական խնդիրների լուծմանը, պաշտպանել նրանց շահերն ու իրավունքները:
2. Նպաստել ուսանողների ուսումնառության արդյունավե-

տության բարձրացմանը, կենսագործունեության ակտիվացմանը, նրանց գիտակրթական, մտավոր, ստեղծագործական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

3. Անմիջականորեն մասնակցել ազգային հարստության պահպանման գործընթացներին:
4. Կազմակերպել ուսանողության ազատ ժամանցը, հանգիստը:
5. Ստեղծել կապեր ՀՀ և արտերկրի բուհերի, ինչպես նաև գործող երիտասարդական կազմակերպությունների հետ:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՈՒԽ-ը գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է իր նպատակներով ու խնդիրներով:
2. ՈՒԽ-ը համագործակցում է ՀՀ-ում գործող նույնաբնույթ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ:

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. ՈՒԽ-ի բարձրագույն ղեկավար մարմինը Ակադեմիայի Ուսանողական Խորհրդի ընդհանուր ժողովն է:
2. Ընդհանուր ժողովը գումարվում է ուսումնական տարվա սկզբին: Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե նրան մասնակցում է ընդհանուր կազմի երկու երրորդից ավելին:
3. ՈՒԽ-ի նախագահության որոշմամբ, ինչպես նաև անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պահանջով կարող է հրավիրվել ՈՒԽ-ի արտահերթ ընդհանուր ժողով:
4. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ բաց քվեարկությամբ:
5. ՈՒԽ-ի նախագահությունը կազմված է ՈՒԽ նախագահից, փոխնախագահից, քարտուղարից և, ի պաշտոնե, հանձնաժողովների նախագահներից:
6. Ընդհանուր ժողովը՝
   - Քննարկում է ՈՒԽ-ի կանոնադրությունը, դրանում կատարում լրացումներ ու փոփոխություններ և ներկայացնում Ակադեմիայի գիտական խորհրդի հաստատմանը:
   - Քննարկում է ընթացիկ և հեռանկարային հարցեր:
   - Ընտրում է ՈՒԽ-ի նախագահ, փոխնախագահ, քարտուղար:

- Լսում է նախագահության հաշվետվությունն ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում ՈՒԽ-ի կատարած աշխատանքների մասին:

7. ՈՒԽ-ի նախագահությունը՝

- Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում է ՈՒԽ-ի աշխատանքների ղեկավարումը:
- Նիստեր է գումարում 2 շաբաթը մեկ անգամ, որտեղ քննարկվում են ՈՒԽ-ի ընթացիկ հարցերը, լսվում են զեկուցումներ ֆակուլտետներում և հանձնաժողովներում կատարվող աշխատանքների մասին:
- Առաջադրում է ներկայացուցիչներ Ակադեմիայի թերթի խմբագրակազմում և Ակադեմիայի արհմիութենական կազմակերպություններում:
- Առաջադրում և հաստատում է հանձնաժողովների նախագահներին, իսկ անբավարար աշխատանքի դեպքում անվստահություն հայտնում և դադարեցնում նրանց գործունեությունը:
- Իր կազմում կարող է ընդգրկել մեկական ներկայացուցիչ միջին մասնագիտական կրթական ծրագրի ուսանողներից:
  - ✓ բուհի շրջանավարտներից,
  - ✓ Ակադեմիայի սփյուռքահայ ուսանողներից:
- Անհրաժեշտության դեպքում հրավիրում է նախագահության արտահերթ նիստեր:

- Նշանակում է հանձնաժողովների նախագահներին և անհրաժեշտության դեպքում վաղաժամկետ դադարեցնում նրանց լիազորությունները:

8. ՈՒԽ-ի նախագահության լիազորությունների ժամկետը լրանում է նորընտիր ՈՒԽ-ի ընդհանուր ժողովի անդրանիկ նիստում: Ժամկետից շուտ այդ լիազորությունները դադարեցվում են ՈՒԽ-ի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ:

9. Վերը նշված ոլորտներին չառնչվող կարևոր այլ հարցերով զբաղվելու համար ՈՒԽ-ը կարող է ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ:

10. ՈՒԽ-ի լիազորությունների ժամկետը 1 տարի է:

11. ՈՒԽ-ի նախագահը՝

- վարում է ընդհանուր ժողովի և նախագահության նիստերը, նիստերի ընթացքում կազմակերպում է նախագահության անդամների հաշվետվությունների ու առաջարկությունների լսում ու քննարկում:
- Խորհուրդը ներկայացնում է պետական մարմիններում և հասարակական կազմակերպություններում, Ակադեմիայի ռեկտորատում և գիտխորհրդում:
- Ընդհանուր ժողովում հանդես է գալիս նախագահության գործունեության մասին կիսամյակային հաշվետվություն-ներով:

- Անհրաժեշտության դեպքում հրավիրում է ՈՒԽ-ի ընդհանուր ժողովի և նախագահության արտահերթ նիստեր:
- Համակարգում է մշտական և ժամանակավոր հանձնա-ժողովների աշխատանքները:
- Առաջարկում է փոխնախագահի և քարտուղարի թեկնածություններ:

Ուսխորհրդի նախագահ 1 տարի ժամկետով կարող է ընտրվել Ակադեմիայի առկա բաժնի ցանկացած ուսանող, որն աչքի է ընկնում բարձր առաջադիմությամբ և հասարակական ակտիվ գործունեությամբ՝ ընդհանուր ժողովի ողջ կազմի ձայների երկու երրորդ մասը բաց քվեարկությամբ ստանալու դեպքում:

12. Փոխնախագահը՝
- Զբաղվում է հանձնաժողովների աշխատանքների համակարգմամբ:
- Նախագահի բացակայության ժամանակ փոխարինում է նրան:

13. Քարտուղարը՝
- Ղեկավարում է քարտուղարության աշխատանքները:
- ՈՒԽ-ի հաստատմանն է ներկայացնում և կազմակերպում ֆինանսական բաշխումները:
- Կազմակերպում է ֆինանսական բաշխումները:

14. ՈՒԽ-ը ստեղծում է հանձնաժողովներ հետևյալ ոլորտների աշխատանքների կազմակերպման համար՝
   - մշակույթի, սպորտի և ազատ ժամանցի,
   - գիտաուսումնական,
   - լրատվության և քարոզչության,
   - ուսանողների իրավունքների պաշտպանության,
   - արտաքին կապերի և հարաբերությունների:
15. Հանձնաժողովներն իրենք են որոշում իրենց նիստերի գումարման պարբերականությունը, դրանց ժամկետները և անհրաժեշտությունը:
16. Հանձնաժողովի նախագահը ՈՒԽ-ի հաստատմանն է ներկայացնում.
   - իր հայեցակարգը տվյալ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ,
   - հանձնաժողովի նախագահի տեղակալի և առնվազն երեք անդամների թեկնածություններ:
17. ՈՒԽ-ը կարող է ստեղծել ակումբներ, որոնք հաշվետու են մշտական հանձնաժողովներին:
18. Կուրսերում բաց քվեարկությամբ ընտրվում են ուսանողական խորհուրդներ՝ առնվազն 5 հոգուց բաղկացած, որոնցից մեկը ընտրվում է կուրսի ՈՒԽ-ի նախագահ:

19. Կուրսի ՈՒԽ-ի անդամներն իրենց լիազորությունները դադարեցնում են կուրսի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ:
20. Կուրսի ՈՒԽ-ի նախագահը հրավիրում և նախագահում է կուրսի ժողովները, ինչպես նաև հետևում ժողովի ընդունած որոշումների կատարման ընթացքին:
21. Կուրսի ՈՒԽ-ը կազմակերպում է կուրսի ուսման, հաճախումների ստուգման մրցույթներ, հետևում համակուրսեցիների կարգապահությանն ու առաջադիմությանը:

5. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

22. ՈՒԽ-ը տնօրինում է նյութական և գույքային միջոցներ, անվճար օգտվում է Ակադեմիայի տարածքային և գույքային միջոցներից: Նրա ֆինանսական միջոցները գոյանում են Ակադեմիայի հաշվից կատարվող մասհանումներից, նվիրատվություններից, հանգանակություններից, կառավարության կողմից հատկացվող գումարներից և ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներից:
23. ՈՒԽ-ը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ձեռք բերել և տնօրինել նյութական միջոցներ:

6. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

24. Ակադեմիայի ՈՒԽ-ը լուծարվում է ՀՀ օրենքներին, Ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան, ինչպես նաև ՈՒԽ-ի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ: Լուծարումից հետո ՈՒԽ-ի միջոցներն օգտագործվում են ՈՒԽ-ի կանոնադրական խնդիրների իրականացման համար:

7. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

25. ՈՒԽ կանոնադրության ընդունումից հետո բոլոր օղակնե-րում, կանոնադրությանը համապատասխան, անցկացվում են ընտրություններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ……	3
2.	ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ……	3
3.	ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ……	4
4.	ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ……	5
5.	ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ……	10
6.	ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ……	11
7.	ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ……	11